655.4
Հ-24

Հ. Ս. Խ. Հ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԳԻՐՔ“

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Երևան—1928 թ.

5 MAY 2013

01 OCT 2010

6.65504
Հ-24

Հաստատված է Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմխորհի կարգադրիչ նիստի 1928 թ. ապրիլի 16-ի, № 14 վորոշումով։

Արձանագրված է Անդրաժողկոմատի Հայաստանի Լիազորի Վարչության 1928 թ. մայիսի 10-ին. I մատյանի № 35-ով։

Հ. Ս. Խ. Հ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

„ՀԱՅԳՈՒՐԳ“

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1003
13674

Յերևան — 1928 թ.

24.020

Գրառեպվար № 761 բ. Տիրաժ 200

Պետհրատի 2-րդ տպարան Երևանում—672

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Հայ Գիրք» բաժնետիրական ընկերությունը հիմնվում է Հ. Ս. Խ. Հ.-ում և Խ. Ս. Հ. Միության սահմաններում ամեն տեսակ գրականություն, թուղթ, դիվանական ու դպրոցական պիտույքներ և առարկաներ, յերաժշտական գործիքներ ու նման իրեր ձեռք բերելու, տարածելու և վաճառելու նպատակով։

2 Ընկերության հիմնադիրներն են՝ Հ. Ս. Խ. Հ. Պետական Հրատարակչությունը, Ֆինժողկոմատը, Հողժողկոմատը, Ժողտնտխորհը, Լուսժողկոմատը, Առժողկոմատը, Հայատը, Հայկոոպը, Հայգյուղկոոպը, Հայգյուղբանկը և ՀԱՄԽ-ը։

3. Առաջին հոդվածում նախատեսված նպատակներն իրագործելու համար ընկերությունն իրավունք ունի.

ա) Ձեռք բերելու և վաճառելու գրքեր, դիվանական և դպրոցական պիտույքներ, յերաժշտական գործիքներ, թուղթ, խաղալիքներ և այլ իրեր։

բ) Բանալու, վարձելու և կառուցելու բաժանմունքներ, գործակալություններ, գրախանութներ, պահեստներ, կիոսկեր և այլն։

գ) Կնքելու կապալի, մատակարարման, կոմիսիոն վարձակալության և այլ տեսակի գործարքներ։

դ) Վարկավորվելու վարկային և այլ տեսակի

հաստատություններում, բանալու ընթացիկ հաշիվներ, մուրհակներ և այլ տեսակի պարտավորություններ տալու և ստանալու։

ե) Մասնակցելու համանման նպատակ ունեցող ձեռնարկություններում։

զ) Դատարաններում հանդես գալու իրբև հայցվոր և դատակիր։

4. Ընկերությունն իր տոմարագրվելու օրից վայելում է իրավական անձի բոլոր իրավունքները։

5. Ընկերությունը չենթարկվում է գույություն ունեցող և ապագայում հրատարակվելիք այն բոլոր որենքներին, վորոշումներին ու կարգադրություններին, վորոնք վերաբերվում են իր գործունեությանը։

6. Ընկերությունն ունի «Հայ Գիրք» բաժնետիրական ընկերության անունը կրող կնիք։

7. Ընկերության Վարչությունը գտնվում է Յերևան քաղաքում։

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴԻՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ, ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ, ՅԵՎ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Ընկերության կանոնադիր դրամագլուխը սահմանվում է 220.000 ռ., վոր բաժանվում է 2200 բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 100 ռուբլի արժողությամբ։

9. Ընկերության բաժնետերեր կարող են լինել միայն պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկությունները, ձեռնարկություններն ու կազմակերպությունները։

10. Ընկերության հիմնադիրները պարտավոր են իրենց վրա թողնել ընկերության կանոնադիր դրամագլուխը կազմող բոլոր բաժնետոմսերն ու վճարել նրանց արժեքը և, մինչև ընկերության գործառնությունների յերկրորդ տարվա բալանսի հաստատվելն, իրավունք չունեն վաճառելու իրենց բաժնետոմսերը։

11. Բաժնետոմսերի արժեքը վճարվում է դրամով կամ հիմնադիրների համաձայնությամբ՝ ընկերության գործունեության նպատակներին համապատասխանող գույքով։ Այդ գույքի նախնական գնահատությունը կատարվում է հիմնադիրների փոխադարձ համաձայնությամբ, վորի մասին հիմնադիրների ստորագրությամբ կազմվում է արձանագրություն և կահացույցակ։ Գույքի վերջնական գնահատությունը պիտի համապատասխանի շուկայի միջին գներին, իսկ այդ գները վորոշելու անհնարինության դեպքում, գույքը գնահատվում է փորձագետների միջոցով։

12. Դրամով մուծված բաժնետոմսերի արժեքը պիտի կազմի վոչ պակաս, քան ընդհանուր կանոնադիր դրամագլխի 25 տոկոսը։ Դրամագլխի այդ մասը պահ է տրվում ՀՍԽՀ Կոմմունալ բանկին և հանձնվում է ընկերությանը, միայն նրա տոմարագրվելուց հետո կամ վերադարձվում է հիմնադիրներին այն դեպքում, յերբ ընկերությունը հիմնադիր ժողովի կողմից համարվի չկազմակերպված։ Գույքով մուծված բաժնետոմսերի արժեքը պահվում է հիմնադիրների մոտ մինչև ընկերության տոմարագրությունը։ Մինչև այդ գույքն ընկերությանը հանձնելը հիմնադիրները պարտավոր են ձեռք առնել ամեն տեսակի անհրաժեշտ միջոցներ այդ գույքը պահպանելու համար։

13. Եթե ընկերության կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ վորոշումը յերեք ամսվա ընթացքում, սկսած հրապարակելու որից, չհավաքվի կանոնադիր դրամագլխի 25 տոկոսը, ընկերությունը համարվում է չկազմակերպված, իսկ յեթե հետևյալ յերեք ամսվա ընթացքում չհավաքի դրամագլխի մնացորդը, ընկերությունը լուծարքի յե յենթարկվում յերեք ամսվա ընթացքում, յեթե կառավարության կողմից բաժնետոմսերի արժեքի վճարման ժամանակամիջոցը չերկարացվի կամ կանոնադիր դրամագլխի չափը չնվազեցվի։

14. Կանոնադիր դրամագլխի 25 տոկոսը ծածկելուց հետո, մի ամսից վոչ ուշ՝ հիմնադիրներն անվանական ծանուցագրերով հրավիրվում են հիմնադիր ժողովի, վորտեղ հիմնադիրները դրավոր զեկուցում են ներկայացնում ընկերության բաժնետոմսերի բաշխման, ի վճարումն բաժնետոմսերի մուծած դրամական գումարների և այլ գույքի, ընկերությունը կազմակերպելու համար հիմնադիրների արած վախքերի և ձեռնարկումների, նրանց կողմից կատարված և ընկերությանը ընդունելու համար առաջարկվող բոլոր գործառնությունների ու գործարքների և առհասարակ այն բոլոր հանգամանքների մասին, վորոնք անհրաժեշտ են ընկերության գործերի դրությունը պարզելու համար. նմանապես ներկայացնում են ընկերության գույքի գույքացուցակը և նրա մուտքի հաշվեկշռի նախագիծը։

Հիմնադիր ժողովը վորոշում է ընկերությունը կազմակերպված համարելու հարցը։ Ապա ընտրում է

ընկերության վարչություն և վերստուգիչ հանձնաժողով և վճռում է այլ անհրաժեշտ գործերը։ Ընտրված վարչությունը պարտավոր է անհապաղ դիմել Անդրկովկասի Առևտրի ժողկոմատի Հայաստանի Լիազորի Վարչությանն՝ ընկերությունը տոմսարգրելու համար։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Հիմնադիր ժողովի գումարման մասին հիմնադիրները պարտավոր են հաղորդել Անդրառևտրի ժողկոմատի Հայաստանի Լիազորի Վարչությանը առնվազն յոթն որ առաջ։

15. Հիմնադիր ժողովում ներկա պիտի լինեն կանոնադիր դրամագլխի ընդհանուր գումարի առնվազն կեսի տերերը։

Ընկերությունը կազմակերպված համարելու վերաբերյալ վորոշումն ընդունվում է հիմնադիր ժողովին մասնակցողների ձայների ընդհանուր թվի յերեք քառորդի մեծամասնությամբ։ Մյուս բոլոր հարցերը վճռվում են ձայների պարզ մեծամասնությամբ։

16 Նախ քան բաժնետոմսերը պատրաստելը, բաժնետերերն ստանում են Ընկերության Վարչությունից ժամանակավոր վկայականներ։ Ժամանակավոր վկայականներն հաստատում են բաժնետերերի կողմից բաժնետոմսերի արժեքը մուծելու հանգամանքը և, մինչև այդ վկայականները բաժնետոմսերով փոխարինելը, նրանց տերերին վերապահվում են այն բոլոր իրավունքները, վորոնք պատկանում են բաժնետերերին։

17. Ընկերության բաժնետոմսերը բացառապես անվանական են և մասնատման յենթակա չեն։

18. Ընկերությունն ունի բաժնետոմսերի մատյան։

19. Բաժնետոմսերը փոխանցվում են ուրիշի անվան, բաժնետոմսերի մատյանում բաժնետիրոջ հայտարարության համաձայն հիշատակություն անելու միջոցով։ Բաժնետոմսերն ուրիշին փոխանցելու համար պահանջվում է Ընկերության Վարչության համաձայնությունը։

20. Սկզբում բաց թողած բաժնետոմսերի արժեքը լրիվ գանձելուց հետո, ընկերությունը, բաժնետերերի ընդհանուր ժողովի վորոշմամբ և կառավարության պատշաճ թույլտվությամբ, կարող է ավելացնել հիմնական դրամագլուխը՝ բաց թողնելով լրացուցիչ բաժնետոմսեր, առաջին անգամ բաց թողած բաժնետոմսերի անվանական գնով։

21. Յեթե լրացուցիչ բաժնետոմսերի արժեքը մի տարի ժամանակամիջոցում չծածկվի, լրացուցիչ բաժնետոմսերի բաց թողնելը համարվում է չկայացած, և այդ մասին ընդունված վորոշումն իր ուժը կորցնում է, յեթե կառավարության կողմից համապատասխան կարգով չնվազեցվի լրացուցիչ բաժնետոմսերի չափը, կամ չերկարացվի նրանց արժեքը գանձելու ժամանակամիջոցը։

22. Յուրաքանչյուր լրացուցիչ բաժնետոմս ձեռք բերող, բացի նրա անվանական գնից՝ պիտի վճարի նաև պրեմիա. պրեմիայի գումարը հավասար պիտի լինի Ընկերության պահեստի և այլ դրամագլուխների այն մասին, վորն ընկնում է նախորդ նվազներում բաց թողած յուրաքանչյուր բաժնետոմսի, ըստ վերջին հաշվեկշռի։ Այս յեղանակով հավաքված պրեմիա-

ները հատկացվում են պահեստի և այլ տեսակի դրամագլուխներն ավելացնելու նպատակին։

23. Ընկերության պահեստի դրամագլուխը կազմվում է՝

ա) Ընկերության զուտ վաստակից, բաժնետերերի ընդհանուր ժողովի վորոշման համաձայն, ամեն տարի առնվազն տասը տոկոս հատկացնելով։

բ) Լրացուցիչ բաժնետոմսերից պրեմիա գանձելով. Պահեստի դրամագլխի համար կատարվող պարտադիր մասնատարությունը շարունակվում է մինչև պահեստի դրամագլուխը կանոնադիր դրամագլխի կեսին հասնելը և նվազելու դեպքում վերսկսվում է, մինչև կանոնադիր դրամագլուխը հիշյալ չափին հասնելը։

24. Պահեստի դրամագլուխը բացառապես ծառայում է Ընկերության վնասները ծածկելու նպատակին Այդ դրամագլուխը պահվում է այնպես, վոր ապահովված լինի նրա անարգել գործադրության հնարավորությունը։

25. Բացի պահեստի դրամագլխից, «Հայ Գիրք» ունի նաև ամորտիզացիոն դրամագլուխ, վոր կազմվում է ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1927 թ. ոգոստոսի 17-ի «Բաժնետիրական ընկերությունների կանոնադրության» (ԽՍՀՄ Որ. և Կ. Ժող. 1927 թ. № 49, հոդ. 500) 68-րդ հոդ. կարգով։

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

26. Ընկերության գործերը վարող մարմիններն են,

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողովը, բ) Վարչությունը և գ) Վերստուգիչ Հանձնաժողովը։

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

27. Ընդհանուր ժողովը լուծում է Ընկերության գործունեության վերաբերյալ բոլոր խնդիրները։ Բացառապես ընդհանուր ժողովն իրավասու է վճռելու հետևյալ հարցերը.

ա) Վորոշում կայացնել Ընկերության համար շենքեր և ձեռնարկություններ ձեռք բերելու, սրանց ոտարելու, կապալով տալու և գրավ դնելու, ինչպես և Ընկերության ձեռնարկություններն ընդլայնելու մասին, վորոշելով միաժամանակ այդ առթիվ լինելիք ծախքերը ծածկելու կարգը։

բ) Ընտրել և վաղաժամ արձակել Վարչության, Վերստուգիչ և Լիկվիդացիոն հանձնաժողովի անդամներին։

գ) Հաստատել Պաշտոնի մեջ Վարչության կողմից ընտրված տնորեն-տեսչին։

դ) Հաստատել և փոխել Վարչության և տնորինտեսչի գործունեության համար կազմած հրահանգները։

ե) Քննել և հաստատել տարեկան տեղեկագրերն ու հաշվեկշիռները և նոր տարվա ծախքերի նախահաշիվն ու գործունեության ծրագիրը։

զ) Բաշխել անցյալ տարվա վաստակը։

ը) Վորոշել հիմնական դրամագլխի չափն ավելացնելու կամ պակասեցնելու, պահեստի այլ դրամագլուխները ծախսելու, կանոնադրությունը փոփոխելու և ընկերությունը լիկվիդացիայի յենթարկելու հարցերը։

28. Ընդհանուր ժողովները լինում են սովորական և արտակարգ։ Սովորական ժողովները գումարում է վարչությունը՝ յուրաքանչյուր տարի վոչ ուշ՝ քան ընկերության գործառնության տարին լրանալուց հետո 4 ամսվա ընթացքում, անցած տարվա տեղեկագիրն ու հաշվեկշիռը, առաջիկա տարվա ծախքերի նախահաշիվը և գործունեության ծրագիրը քննելու և հաստատելու, այլ և Ընկերության Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամներ ընտրելու համար։

Արտակարգ ժողովները գումարում է Վարչությունն իր հայեցողությամբ կամ վերստուգիչ հանձնաժողովի և կամ այն թվով բաժնետերերի պահանջով, վորոնք միասին ունեն հիմնական դրամագլխի առնվազն 5 տոկոսը։ Ընդհանուր ժողով գումարելու պահանջը Վարչությունն ի կատար է ածում վոչ ուշ՝ քան այդ մասին գրավոր դիմում ստանալուց յերկու շաբաթ հետո։

29. Ընդհանուր ժողովի գումարման մասին նախորոք հայտարարվում է կառավարական որգանում՝ «Խորհրդային Հայաստան» լրագրում, համենայն դեպս վոչ-ուշ, քան ժողովի որից 14 որ առաջ։ Հայտարարության մեջ, վորպես և բաժնետերերին ուղարկվող ծանուցագրերում նշանակվում են.

ա) Ժողովի գումարման որը, ժամը և տեղը,

բ) Ժողովի քննության յենթակա հարցերի ցուցակը։

30. Ընդհանուր ժողովի քննության յենթակա գործերը ներկայացվում են նրան միայն վարչության միջոցով։ Այն բաժնետերերը, որոնք ցանկանում են վորևե առաջարկ անել ընդհանուր ժողովին, պետք է այդ մասին գրավոր հայտնեն Վարչությանը վոչ ուշ՝ քան ընդհանուր ժողովից յոթն որ առաջ։

31. Ընդհանուր ժողովը բաց է անում Վարչության նախագահը, վորից հետո բաժնետերերն իրենց միջից ընտրում են ժողովի նախագահ։ Վերջինս իրավունք չունի իր հայեցողությամբ հետաձգել ընդհանուր ժողովի որակարգի մեջ մտած հարցերի քննությունը։

32. Ընկերության բաժնետոմս ունեցողներն ամենքն իրավունք ունեն մասնակցելու ընդհանուր ժողովներին։ Բաժնետոմս ունեցող իրավական անձինք մասնակցում են ժողովներին իրենց լիազորների միջոցով։

38. Ամեն մի բաժնետոմս մի ձայնի իրավունք է տալիս։

34. Ընդհանուր ժողովը կայացած է համարվում, յեթե ներկա յեն այն թվով բաժնետերեր, վորոնք ունեն վոչ պակաս՝ քան հիմնական դրամագլխի մի յերրորդ մասը։ Ընդհանուր ժողովի վճիռները հանվում են բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ։

35. Կանոնադրության փոփոխման, հիմնական դրամագլխի չափն ավելացնելու կամ պակասեցնելու, Ընկերությունը լիկվիդացիայի յենթարկելու և Ընկերությունն ուրիշ ակցիոներական ընկերության հետ միացնելու հարցերի վերաբերմամբ կայացած վորոշումների որինականության համար պահանջվում է ներկա յեղողների ձայների յերկու յերրորդը և ժողովին ներկա պիտի լինեն վոչ պակաս՝ քան հիմնական դրամագլխի կեսը ներկայացնող բաժնետերերը։ Ընկերության նպատակը փոխելու համար պահանջվում է վոչ պակաս՝ քան հիմնական դրամագլխի $^3/_4$-ը ներկայացնող բաժնետերերի ներկայությունն ու սրանց ձայների $^4/_5$-ի համաձայնությունը։

36. Յեթե ժողովի յեկած բաժնետերերը հիմնական դրամագլխի՝ կանոնադրությամբ պահանջվող մասը չեն ներկայացնում, Վարչությունը՝ չորս որից վոչ-ուշ, յերկրորդ ընդհանուր ժողով է հրավիրում, պահպանելով 28 հոդվ. պահանջները։ Այս յերկրորդ ժողովը կայացած և համարվում անկախ ներկայացրած դրամագլխի չափից, սակայն վորոշումների որինականության համար պահանջվում է ձայների նույն մեծամասնությունը, վոր սահմանված է առաջին ժողովի համար։

37. Ընդհանուր ժողովի վորոշումները պարտադիր են բոլոր թե ներկա և թե բացակա բաժնետերերի համար։ Ընդհանուր ժողովի վորոշումները, վորոնք խախտում են բաժնետերերի իրավունքները, կարող են, վորոշումներն ընդունվելու որից, մի ամավա ընթացքում դանգատարկվել՝ Ընկերության դեմ դատապահանջ ներկայացնելու միջոցով։

Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

38. Վարչությունը բաղկացած է 3 անդամից, որոնց ընտրում է ընդհանուր ժողովը, մեկ տարի ժամանակով։

Ծանոթություն.—Պաշտոնից հեռացած կամ իրենց պարտականությունները կատարելու հնարավորությունից ժամանակավորապես զրկված Վարչության անդամներին փոխարինելու համար ընտրվում են յերկու փոխ-անդամ, նույնպես մեկ տարի ժամանակով։

39. Վարչության նախագահին ընտրում են Վարչության անդամներն իրենց միջից։ Վարչության նախագահը կարող է հեռացվել պաշտոնից միմիայն ընդհանուր ժողովի վորոշմամբ։

40. Վարչությունը տնորինում է Ընկերության այն բոլոր գործերն ու դրամները, որոնց տնորինությունը բացառապես ընդհանուր ժողովի իրավասությանը չի վերաբերում։

Մասնավորապես Վարչության իրավասությանն են վերաբերում.

ա) Բաժնետոմսերի արժեքը գանձելը, ժամանակավոր վկայականներ և բաժնետոմսեր տալը.

բ) Հաշվապահության, դրամարկղի և գործավարության կարգավորումը.

գ) Տարեկան տեղեկագրեր, հաշվեկշիռներ, նախահաշիվներ և գործողությունների ծրագիր կազմելը.

դ) Ծառայողների կազմը և ռոճիկի չափը վորոշելը, նրանց ընդունելն ու արձակելը.

ե) Պահեստներ և այլ շենքեր վարձելը.

զ) Ընկերության գույքն ապահովագրել տալը.

ը) Գույքը գնելն ու վաճառելը՝ թե կանխիկ դրամով և թե, ապառիկ.

թ) Մուրհակներ և այլ ժամկետային հանձնառություններ տալը և ի վճարումն ընդունելը.

ժ) Ընկերության անունով ստացված մուրհակները զեղչելը.

ի) Պետական հաստատությունների և ձեռնարկությունների, հասարակական և մասնավոր կազմակերպությունների և անհատների հետ ընկերության անունից պայմանագրեր կնքելը.

լ) Ընկերության անունից փոխանորդագրեր տալը.

խ) Ընկերության ձեռնարկությունները, ինչպես և գրասենյակները, գործակալությունները, բաժանմունքները և այլն կառավարելը (ղեկավարելը).

ծ) Ընկերության գործերի վերաբերմամբ հայցեր ներկայացնելը և պատասխան տալը դատարանում։

41. Վարչությունը բոլոր ծախքերը կատարում է համաձայն նախահաշիվների, որոնք յուրաքանչյուր տարի հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից։ Ընդհանուր ժողովի վորոշմամբ, Վարչությունն անհետաձգելի դեպքերում իրավունք ունի նախահաշվից դուրս ծախքեր կատարելու, միայն այդ ծախքերի անհրաժեշտության ու հետևանքների համար պատասխանատու չե ընդհանուր ժողովի առաջ։ Ամեն մի այդպիսի ծախքի մասին վարչությունը պարտավոր է

զեկուցել առաջիկա ընդհանուր ժողովին՝ կատարված ծախքը հաստատելու համար։

42. Ընկերության գործերի վերաբերյալ ամբողջ ընթացիկ գրագրությունը կատարվում է վարչության անդամներից մեկի ստորագրությամբ։

Մուրհակները, պարտքի հանձնառությունները, փոխանորդագրերը, պայմանագրերը և վարկային հաստատություններից դրամ ստանալու պահանջագրերն ստորագրում են առնվազն Վարչության յերկու անդամ։ Զեկերն ստորագրում է Վարչության անդամներից մեկը, վորը դրա համար լիազորություն է ստանում վարչությունից։ Փոստից ամեն տեսակ նամակներ, դրամ, ծանրոցներ և դոկումենտներ ստանալու համար բավական է վարչության անդամներից մեկի ստորագրությունը, վավերացված ընկերության կնիքով,

43. Ընկերության գործերն ու գործառնություններն անմիջականորեն վարելու համար վարչությունն ընդհանուր ժողովի հաստատությամբ կարող է իր միջից կամ կողմնակի անձերից հրավիրել տնորեն-տեսուչ, վորի վարձատրության չափը սահմանում է ընդհանուր ժողովը։ Վարչության կողմից ընտրված տնորեն-տեսուչը, ինչպես և նրա համար կազմած հրահանգը հաստատում է ընդհանուր ժողովը։

Տնորեն-տեսուչը, յեթե վարչության անդամ չէ, մասնակցում է Վարչության նիստերին խորհրդակցական ձայնով։

44. Վարչությունը կարող է լիազորել իր կողմից տնորեն-տեսչին առանձին փոխանորդագրով այն

003
13674

բոլոր դեպքերում, յերբ պահանջվում է վարչության բոլոր անդամների ընդհանուր գործողությունը, բացի բաժնետոմսեր ստորագրելուց, և պատասխանատու է ընկերության առաջ այն բոլոր կարգադրությունների համար, վոր կանի տնորեն-տեսուչը փոխանորդագրի համաձայն։

45. Վարչությունը գումարվում է հարկ յեղած դեպքում, բայց համենայն դեպս վոչ պակաս՝ քան ամիսը յերկու անգամ։ Վարչության վճիռների որինականության համար անհրաժեշտ է, վոր նիստին ներկա լինեն առնվազն 2 անդամ։ Վարչության նիստերի համար կազմվում են արձանագրություններ, վորն ստորագրում են վարչության նիստին ներկա յեղող բոլոր անդամները։

46. Վարչության վճիռները կայացվում են ներկա յեղող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ. ձայների բաժանվելու և հավասարության դեպքում, վիճելի հարցի վորոշումը թողնվում է ընդհանուր ժողովին։ Յեթե Վարչության վճռին հակառակ ձայն տվող անդամն արձանագրության մեջ մացնի իր առանձին կարծիքը, նա ազատվում է այդ վճռի հետևանքներից առաջացած պատասխանատվությունից։

47. Վարչության անդամները կարող են արձակվել պաշտոնից գործառնական տարվա ընթացքում։ Վարչության անդամներն, ապորինի կարգադրություններ անելու, իրենց իրավասության սահմաններից դուրս գալու և իրենց պարտականությունները չկատարելու դեպքում, կրում են համապարտ պատասխանատվություն։

Գ. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

48. Վերստուգիչ հանձնաժողովը բաղկացած է 3 հոգուց և ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում, մի տարի ժամանակով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Վարչության անդամները Վերստուգիչ հանձնաժողովի անդամ կարող են ընտրվել վոչ շուտ՝ քան վարչության կազմից հեռանալուց յերկու տարի հետո։

49. Վերստուգիչ հանձնաժողովի պարտականությունն է՝ ստուգել իր հայեցողությամբ վորոշված ժամանակ և կարգով ու միջոցներով Վարչության գործունեությունը, նրա տարեկան տեղեկագիրը, դրամարկղի դրությունն ու գույքը, նախնական քննության յենթարկել Ընկերության ամեն տեսակի նախահաշիվներն ու առաջիկա տարվա գործունեության ծրագիրը և, առհասարակ, ստուգել Ընկերության ամբողջ գործավարությունն ու հաշվետվությունը։

Վարչությունը պարտավոր է ամեն աջակցություն ցույց տալ Վերստուգիչ հանձնաժողովին՝ նրա վրա դրած պարտականությունները կատարելու համար։

Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է վոչ ուշ՝ քան ընդհանուր ժողովից մի ամիս առաջ՝ ձեռնարկել ստուգելու վարչության կազմած տարեկան տեղեկագիրն ու հաշվեկշիռը, դրամարկղն ու դրամագլուխները, այլ և տեղեկագրին վերաբերյալ մատյանները, հաշիվներն ու փաստաթղթերը և առհասարակ Վարչության գործավարությունը։ Տեղեկագիրն ու

հաշվեկշիռն ստուգելուց հետո, Վերստուգիչ հանձնաժողովը տալիս է իր յեզրակացությունը Վարչությանը, վոր իր բացատրությունների հետ միասին ներկայացնում է ընդհանուր ժողովին ի քննություն։

50. Վերստուգիչ հանձնաժողովի նիստերի համար կազմվում են մանրամասն արձանագրություններ, վորոնց մեջ նշանակվում են անդամների բոլոր դիտողություններն ու առանձին կարծիքները։ Այս արձանագրությունները, ինչպես և վերստուգիչ հանձնաժողովի բոլոր զեկուցումներն ու յեզրակացությունները Վարչությունն, իր բացատրության հետ միասին, պարտավոր է ներկայացնելու առաջիկա ընդհանուր ժողովին։

51. Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց վրա դրված պարտականությունները չկատարելու կամ նրանցով առաջացած վնասների համար համապատասխանատվություն են կրում Ընկերության, իսկ սրա սնանկության դեպքում՝ նրա պարտատերերի առաջ։

IV. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՇԱՀԻ ՈՒ ՇԱՀԱԲԱԺՆԻ ԲԱՇԽՈՒՄԸ

52. Ընկերության գործառնությունների տարին սահմանվում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը, բացի առաջին հաշվետու տարուց, վորը հաշվում է Ընկերության հիմնադրության օրից մինչև դեկտեմբերի 31-ը։

53. Յուրաքանչյուր անցած գործառնական տարվա համար վարչությունը ներկայացնում է ընդհա-

նուր ժողովին ի հաստատություն Ընկերության բոլոր գործառնությունների մանրամասն տարեկան տեղեկագիրը և նրա շրջանառությունների հաշվեկիրը։

Ընդհանուր ժողովից վոչ ուշ՝ քան մի շաբաթ առաջ՝ Վարչության աշխատանքի ժամերին հնարավորություն և տրվում բաժնետերերին ծանոթանալու տեղեկագրին, հաշվեկշռին և դրանց վերաբերող բոլոր մատյաններին, հաշիվներին, փաստաթղթերին և այլն։

54. Տեղեկագիրը պիտի հանգամանորեն պարունակի հետևյալ գլխավոր հոդվածները.

ա) Հիմնական, պահեստի և շինության դրամագլուխների վիճակը.

բ) Ընկերության ծառայողների ռոճիկների, ինչպես նաև վարչական ծախքերի հաշիվը.

գ) Ընկերության պարտատի գույքի հաշիվը՝ առքի կամ շուկայի գներով, նայած թե վորն և ավելի ցածը.

դ) Ընկերության պարտատերերի և պարտապանների հաշիվը.

ե) Վաստակի ու վնասի հաշիվը և

զ) Զուտ վաստակի հաշիվը և նրա բաշխման նախագիծը։

55. Ընդհանուր ժողովի կողմից տեղեկագիրը հաստատվելուց և բոլոր ծախքերը ծածկելուց հետո, մնացած գումարից, եթե այդպիսի գումար մնա, 10 տոկոս հատկացվում է պահեստի դրամագլխին։ Կարող են լինել հատկացումներ և այլ նպատակների համար՝

ընդհանուր ժողովի հայեցողությամբ։ Մնացած գումարը տրվում է բաժնետերերին վորպես շահաբաժին։

ԾԱՆՈԹ.—Գույքի արժեքի շինության դրամագլխի համար հատկացում և կատարվում Ընկերության խառն հասույթից՝ իրական կարիքի համեմատ և անկախ Ընկերության գործունեության հետևանքներից։

56. Ընդհանուր ժողովի կողմից հաստատված տեղեկագիրն որենքով սահմանված կարգով հրապարակվում է ի գիտություն հանրության։

57. Շահաբաժին տալու տեղի և ժամանակի մասին վարչությունը հայտարարում է ի գիտություն բաժնետերերի։

Վ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԻ ՐՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ.

58. Ընկերության գործերի վերաբերյալ՝ բաժնետերերի միջև, ինչպես նաև Ընկերության Վարչության կամ այլ ընտրովի անձանց միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են ընդհանուր ժողովում, եթե վիճող յերկու կողմն ել համաձայն են, կամ քննվում են ընդհանուր դատական կարգով։

59. Ընկերության պատասխանատվությունը սահմանափակվում է իրեն պատկանող գույքով։

60. Ընկերության գոյության պայմանաժամ չի սահմանվում.

61. Ընկերության գործունեությունը դադարում է՝

ա) Յերբ կանոնադիր դրամագլխի յերկու հինգերորդ մասը կորսայան յենթարկվի, յեթե բաժնետերերն առաջիկա գործառնական տարվա ընթացքում չլրացնեն դրամագլուխը, կամ կառավարության վորոշումով ընկերության դրամագլխի չափը չպակասեցվի, բ) յեթե դատարանի կողմից Ընկերությունը հայտարարվի սնանկացած, գ) ՀՍԽՀ կառավարության վորոշումով՝ այն դեպքում, յերբ ընկերությունը շեղվի կանոնադրությամբ մատնանշած նպատակից։

62. Դադարման առիթ ծագելուց հետո, մի ամիս ժամանակամիջոցում Վարչությունը գումարում է բաժնետերերի ընդհանուր ժողով, վորը և սահմանում է ընկերության գործերի և գույքի դադարման կարգն ու ժամանակամիջոցը։

63. Ընդհանուր ժողովը ընտրում է իր միջից առնվազն յերեք հոգուց բաղկացած հաշվեհարդար հանձնաժողով, վորի կազմի մեջ մտնում է ՀՍԽՄ Ֆինժողկոմատի մի ներկայացուցիչը։

64. Հաշվեհարդար հանձնաժողովը կատարում է լիկվիդացիայի գործողությունները, ղեկավարվելով ԽՍՀՄ 1927 թ. ոգոստոսի 17-ի, Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությամբ» սահմանված կարգով (Որ. և Կարգ. ժող. 1927 թ. № 49, հոդ. 499—500) և լիկվիդացիայի մասին հրատարակվելիք այլ որենքներով ու կարգադրություններով։

65. Հաշվեհարդար հանձնաժողովը իր գործողությունների համար հաշիվ և տալիս ընդհանուր ժողովին՝ սրա վորոշած ժամանակին և, բացի դրանից, լիկվիդացիան վերջանալուց հետո, ներկայացնում է ընդհանուր տեղեկագիր։

66. Լիկվիդացիայի հետևանքով Ընկերության պարտքերը վճարելուց և նրանց վճարումն ապահովելուց հետո, նրա գույքի ազատ մնացորդը հատկացվում է այն նպատակին, վոր կորոշվի ՀՍԽՀ կառավարության կողմից։

67. Թե լիկվիդացիան սկսելու և թե ավարտելու մասին՝ առաջին դեպքում Վարչությունը, իսկ յերկրորդ դեպքում հաշվեհարդար հանձնաժողովը տեղեկացնում են Անդրառևտրի Ժողկոմատի Հայաստանի լիազորի Վարչությանը և պատշաճ կարգով հայտարարում են ի գիտություն բաժնետերերի և շահագրգռված հաստատությունների ու անձանց։

ՀՀ Ազգային գրադարան
NL0305116

24.020